

կաւ ինչ յառաջագոյն, իբրեւ Չաքարիայն նուիրակ առ ի մէնջ առ Սրբութիւնդ առաքեցաւ, դէպք եւ պատահարք ետուն երկոցունց Լուսիտանիացի կրօնաւորաց, որք ի թագաւորէ անտի Սպանիացւոց առ շահն Պարսից առաքեալ էին, զալ այսր առ մեզ, զորս եւ ընկալաք սիրով. ելին յայց եւ մենաստանաց մերոց. եւ բարձեալ ընդ իւրեանս նշխարս ինչ սրբոց յուղարկեցան: Այն ինչ եղեալ էր նոցա գոտսն անդր քան զսահմանս Պարսից եւ ահա երթեալ թշնամիք մեր պատմեցին զամենայն անցս թագաւորին Պարսից. որում ամայ ես յանդիման. սակաւիկ մի եւ վճարեալ էր վասն իմ. հազիւ ուրեմն զերծայ ի գլխապարտն լինելոյ: Ո՛հ, յորպիսի աղէտս վտանգից գտանիմք. վտանգք, որք չներեն ինչ վճարել զորոց դրէքդ: Այլ ցանկամք զնալ ըստ կամաց սրբութեան ձերոյ. յորոց չեմք իսկ կարի ի բացեայ:

Եկեալ զխնդրովն, որ ի խառնումն ջրոյ ի զոհն պատարագի հայիցի, ասեմք. Հաւատամք եւ խոստովանիմք, եթէ Յիսուս Քրիստոս Տէր մեր զանձն Հօր պատարագ ի խաչին մատոյց եւ զարիւն իւր պատուական ի փրկանս աղատութեան մերոյ ի ծառայութենէ ետ, չնորհեաց. դարձեալ հաւատամք եւ դաւանիմք, եթէ ի վախճան կատարածի ահաւոր խորհրդոյս ոմն ի զինուորաց տիգաւ զկողն նորա խոցեաց, ուստի բղխեաց վաղվաղակի ագբիւր ջրոյ ի լուացումն աղտից եւ արատոյ մեղաց. եւ այս իսկ են ճշմարիտ պատճառք, եթէ